ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N 3117-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ԱՃԱՌՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 67.53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (55.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 126.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳՈՀԱՐ ՅՈՒՐԻԿԻ(1/4ՄԱՍ), ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ(1/4ՄԱՍ), ԱՐՄԱՆ ԱՐԹՈՒՐԻ (1/4ՄԱՍ) ԵՎ ԱՐՄԵՆ ԱՐԹՈՒՐԻ(1/4ՄԱՍ) ՉԱԽԱԼՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 126.69 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22092026-08-0003 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի № 188-Ա որոշումը, քաղաքացի՝ Գոհար Յուրիկի Չախալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 8-ին N 8737 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 67.53 (վաթսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (55.36(հիսունհինգ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 398899 (երեք հարյուր իննսունութ հազար ութ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Գոհար Յուրիկի(1/4մաս), Արթուր Գևորգի(1/4մաս), Արման Արթուրի (1/4մաս) և Արմեն Արթուրի(1/4մաս) Չախալյաններին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 126.69 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 562756 (հինգ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Գոհար Յուրիկի(1/4մաս), Արթուր Գևորգի(1/4մաս), Արման Արթուրի (1/4մաս) և Արմեն Արթուրի(1/4մաս) Չախալյաններին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Գոհար Յուրիկի Չախալյանին պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գոհար Յուրիկի Չախալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գոհար Յուրիկի Չախալյանի միջոցների հաշվին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի